ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՄԻՋԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

27 հոկտեմբերի 2016 թվականի **թիվ 15** քաղ. Մինսկ

«Եվրասիական տնտեսական միության շրջանակներում ապրանքների հետագծելիության մեխանիզմի մասին» համաձայնագրի նախագծի վերաբերյալ

«Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 16–րդ հոդվածին համապատասխան՝

1. Ի գիտություն ընդունել «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում ապրանքների հետագծելիության մեխանիզմի մասին» համաձայնագրի նախագծի (այսուհետ՝ Համաձայնագրի նախագիծ) հետ կապված աշխատանքի ընթացքի վերաբերյալ տեղեկատվությունը:

2. Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների կառավարություններին՝ շարունակել Համաձայնագրի նախագծի հետ կապված աշխատանքը՝ ելնելով մինչև 2016 թվականի դեկտեմբերի 31-ը այն ներպետական համաձայնեցման ուղարկելու անհրաժեշտությունից:

3. Սույն Կարգադրությունն ուժի մեջ է մտնում դրա ընդունման օրվանից:

Եվրասիական միջկառավարական խորհրդի անդամներ՝

Հայաստանի Հանրապետությունից	**Բելառուսի Հանրապետությունից**	**Ղազախստանի Հանրապետությունից**	**Ղրղզստանի Հանրապետությունից**	**Ռուսաստանի Դաշնությունից**